

### **Հարց**

**Փոխանակման գործարքների մասով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ենթակա՞ են, արդյոք, հաշվանցման:**

### **Պատասխան**

«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ փոխանակման գործարքների մասով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները գործարքի կողմ հանդիսացող սուբյեկտների կողմից հաշվանցման ենթակա չեն:

### **Հարց**

**Կազմակերպության շահութահարկը հաշվարկելիս արտադրական նշանակության շենքի ամորտիզացիոն հարկացումները ինչպե՞ս պետք է նվազեցվեն համախառն եկամտից, եթե շենքի մի մասը վարչական նշանակությամբ է օգտագործվում. նախատեսված են սենյակներ կառավարման ապարատի համար:**

### **Պատասխան**

«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գործունեության մեջ օգտագործվող և մաշվածքի ենթակա հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարի չափով՝ նույն հոդվածով սահմանված ժամկետներում:

Նույն օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս արտադրական նշանակության հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են արտադրանքի և ծառայությունների իրացմանը համապատասխան, իսկ վարչական նշանակության հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների չափով նվազեցումները կատարվում են այն տարվա ընթացքում, որին դրանք վերաբերում են: Ընդ որում, վարչական նշանակության հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների չափով նվազեցումները կատարվում են նաև համախառն եկամտի բացակայության դեպքում: Արտադրական նշանակության շենքի մի մասը վարչական նշանակությամբ օգտագործելու պարագայում, ամորտիզացիոն մասհանումների չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են՝ հաշվի առնելով համապատասխան սենյակների մակերեսի տեսակարար կշիռը:

### **Հարց**

**Անհատ ձեռնարկատերը զբաղվում է տնկիների արտադրությամբ և մանրածախ վաճառքով: Պարտադիր է, արդյոք, ՀԴՄ-ի տեղադրումը, եթե արտադրանքն իրացվում է առևտրի իրականացման վայրում գտնվող խանութի միջոցով:**

### **Պատասխան**

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ ԼՂՀ տարածքում անհատ ձեռնարկատերերի և

կազմակերպությունների կողմից առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով *մանրածախ վաճառք* իրականացնելիս կանխիկ դրամով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում (ներառյալ՝ կանխավճարները) հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: Մասնավորապես, ՀԴՄ-ների կիրառումը պարտադիր չէ, եթե գյուղատնտեսական արտադրանքն (այդ թվում՝ տնկիները) իրացվում է տրանսպորտային միջոցներով կամ առևտրի իրականացման վայրերում (առևտրի կենտրոններում, սպառողական ապրանքների շուկաներում, գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում, տոնավաճառներում և ցուցահանդես-վաճառքի անցկացման վայրերում) գտնվող բաց վաճառասեղաններից: Քանի որ վերը նշված պարագայում վաճառքն իրականացվում է խանութի միջոցով, ՀԴՄ-ի տեղադրումը պարտադիր է:

### **Հարց**

***Առևտրի հարկով հարկման կարգից հարկման ընդհանուր կարգին անցնելու պահից իրացման շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարներից հաշվանցվում են, արդյոք, առևտրի հարկ վճարող համարվելու ժամանակահատվածում մարտկարարների հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները:***

### **Պատասխան**

Ոչ: «Առևտրի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առևտրի հարկով հարկման կարգից ընդհանուր հարկման կարգի անցնելու պահից իրացման շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարներից չեն հաշվանցվում առևտրի հարկ վճարող համարվելու ժամանակահատվածում մատակարարների հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարները:

### **Հարց**

***Պարտադիր դրոշմավորման ենթակա ջրերի, հյուսիսի արտահանման դեպքում դրոշմապիտակների առկայությունը, արդյո՞ք, պարտադիր է:***

### **Պատասխան**

Համաձայն «Առևտրի և ծառայությունների մասին» ԼՂՀ օրենքի 9.1-ին հոդվածի 1-ին կետի՝ դրոշմապիտակներով պարտադիր դրոշմավորման ենթակա են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում օտարման ենթակա (օտարվող)՝ օրենքի 9.2-րդ հոդվածում նշված ապրանքները:

### **Հարց**

***ԼՂՀ կազմակերպության և ոչ ռեզիդենտ կազմակերպության միջև իրականացվող գործարքի համար անկանխիկ վճարումը կարո՞ղ է, արդյոք, իրականացվել արտարժույթով:***

### **Պատասխան**

«Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ռեզիդենտի և ոչ ռեզիդենտի միջև կատարվող վճարումները արտարժույթով կարող են իրականացվել միայն անկանխիկ ձևով:

### **Հարց**

**Ավտոլվացման գործունեությունը ենթակա է, արդյո՞ք, հարկման արտոնագրային վճարների համակարգով:**

### **Պատասխան**

Ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) միջոցով ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկումը դասակարգվում է ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 12.02.2013թ. N 20-Ն հրամանով հաստատված՝ Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների (ԱԴԳՏ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դասակարգչի 45.20 ծածկագրին: Այդ ծածկագիրն իր մեջ ներառում է ավտոմեքենաների մեխանիկական և էլեկտրական սարքավորանքի, թափքի, ներարկման համակարգի, շարժիչի տեխնիկական սպասարկումը և նորոգումը, ավտոմեքենաների լվացումը, փայլեցումը և այլն: Ըստ այդմ, «Արտոնագրային վճարների մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջները բավարարելու դեպքում ավտոլվացման գործունեությունը կհարկվի արտոնագրային վճարների հարկման համակարգով:

### **Հարց**

**Կարո՞ղ է, արդյոք, արտոնագրային վճար վճարող անձը ունենալ վարձու աշխատող:**

### **Պատասխան**

«Արտոնագրային վճարների մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նշված օրենքով սահմանված գործունեության տեսակներ իրականացնող վճարողները չեն կարող ունենալ վարձու աշխատողներ (իրենց գործունեության իրականացման համար օգտագործել անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այլ ֆիզիկական անձանց աշխատանքը):